



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Արմեն Սկրտչյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության

թիվ. 6562/03 գանգատի

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք), նիստ գումարելով 2005 թվականի հոկտեմբերի 20-ին որպես Պալատ, հետևյալ կազմով. դատավորներ՝

Պրն. Բ.Մ. Ջուպանչիչ (Նախագահ),

Պրն. Լ. Քաֆլիչը,

Տիկին Մ. Ցացա-Նիկոլովսկան,

Պրն. Վ. Ջագրեբելսկին,

Տիկին Ա. Գյուլունյանը,

Պրն. Դավիթ Թիոր Բյորգվինսոն,

Պրն. Ջիեմելլե և

Բաժանմունքի քարտուղար Պրն. Վ. Բերգերը

Քննելով 2002 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացված վերոնշյալ գանգատը.

Խորհրդակցության արդյունքում կայացրեց հետևյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ

Դիմումատուն, պրն. Արմեն Սկրտչյանը, ազգությամբ հայ է, ծնվել է 1972 թվականին և բնակվում է Երևանում: Դատարանում նրան ներկայացնում է Երևանում փաստաբանական գործունեությամբ զբաղվող պրն. Ն. Բաղդասարյանը: Պատասխանող մասնակից պետությունը Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ պրն. Գևորգ Կոստանյանը:

Ա. Գործի հանգամանքերը

Գործի հանգամանքները, այնպես ինչպես դրանք ներկայացվել են կողմերի կողմից, հետևյալ են.

Դիմումատուն «Հանրապետություն» կուսակցության անդամ է:

2002 թվականի մայիսի 10-ին «Հանրապետություն» կուսակցությունը դիմել էր Երևանի քաղաքի քաղաքապետին 2002 թվականի մայիսի 14-ին Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու համար թույլտվություն ստանալու նպատակով:

2002 թվականի մայիսի 13-ին քաղաքապետը թույլատրում է անցկացնել հանրահավաքը:

Հանրահավաքն, ինչպես նախատեսված էր, տեղի ունեցավ 2002 թվականի մայիսի 14-ին, Ազատության հրապարակում, մոտավորապես ժամը 15.00-ին: Այն անցկացվեց «Հանրապետություն» կուսակցության և ևս վեց այլ քաղաքական կուսակցությունների հետ համատեղ: Դիմումատուն մասնակցեց հանրահավաքին:

Հանրահավաքից հետո, մոտավորապես ժամը 16.00-ին, դիմումատուն հանրահավաքի մասնակցիներին կոչ արեց Բաղրամյան պողոտայով երթով շարժվել դեպի Ազգային ժողովի շենքը: Մարդկանց ամբոխը դիմումատուի հետ միասին երթով շարժվեց պողոտայով:

Նույն օրը, ժամը 23:10-ին դիմումատուն ձերբակալվում և բերման է ենթարկվում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Արաբկիրի բաժին: Ոստիկանության աշխատակիցների կողմից կազմված վարչական իրավախախտման մասին արձանագրության համաձայն դիմումատուն «կազմակերպել է անօրինական երթ և խախտել է ցույցերի և փողոցային երթերի անցկացման սահմանված կարգը»:

2002 թվականի մայիսի 15-ին Երևանի կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը քննեց դիմումատուի գործը: Դատարանը, ոստիկանության կողմից կազմված փաստաթղթերի հիման վրա որոշեց, որ.

«[Դիմումատուն], խախտելով երթերի և ցույցերի անցկացման սահմանված կարգը, 2002 թվականի մայիսի 14-ին, մոտավորապես ժամը 16.00-ին մի խումբ անձանց հետ մասնակցել է չարտոնված երթի, այսպիսով կատարելով ... Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180.1 հոդվածով նախատեսված զանցանք: Հաշվի առնելով

գործի հանգամանքներն ու [դիմումատուի] անձը, դատարանը անհրաժեշտ է գտնուն վարչական տուգանք կիրառել:»

Դատարանը սահմանեց վարչական տուգանք՝ 500 ՀՀ դրամի չափով: Որոշումը վերջնական էր և ենթակա չէր բողոքարկման:

2002 թվականի մայիսի 24-ին դիմումատուն ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան բողոք ներկայացրեց: Իր բողոքում դիմումատուն պնդում էր, որ Սահմանադրության համաձայն ինքն ունի առաջին ատյանի դատարանի որոշումները վերադաս դատարան բողոքարկելու իրավունք: Նա այնուհետև պնդում էր, որ հավաքների ազատության իր իրավունքի սահմանափակումը նախատեսված չէր օրենքով, քանի որ գոյություն չունեին որևէ օրենք, որի սահմանած նորմերը դիմումատուն ենթադրաբար խախտել էր: Բացի այդ, նա վերաքննիչ դատարանին մասնավորապես խնդրել էր մատնանշել այդ օրենքը, եթե այդպիսին գոյություն ունի:

2002 թվականի հունիսի 14-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը քննեց դիմումատուի բողոքը և գտավ, որ.

«2002 թվականի մայիսի 14-ին մոտավորապես ժամը 15:00-ին [դիմումատուն] մասնակցել է Երևանի Ազատության հրապարակում անցկացված արտոնված ցույցին: Դրանից հետո, մոտավորապես ժամը 16:00-ին [դիմումատուն] մի խումբ անձանց հետ մասնակցել է Բաղրամյան պողոտայով ընթացող չարտոնված երթի, հանդիսանալով երթի ղեկավարը: [Այս կապակցությամբ] նա բերման է ենթարկվել [ոստիկանություն]:

Դիմումատուի կողմից չարտոնված երթի ղեկավարումը որակվում է, որպես ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180.1 հոդվածով նախատեսված զանցանք...»:

2002 թվականի հունիսի 24-ին դիմումատուն վճռաբեկ բողոք բերեց ՀՀ վճռաբեկ դատարան:

2002 թվականի հուլիսի 1-ի նամակով վճռաբեկ դատարանը դիմումատուին տեղեկացրեց, որ վիճարկվող որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունք ներպետական օրենսդրությամբ սահմանված չէ:

Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունն ու միջազգային իրավունքը

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (1985 թվականի դեկտեմբերի 6)

Հոդված 180.1.

«Ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման կամ անցկացման սահմանված կարգի խախտումը՝ առաջացնում է տուգանքի

նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև հարյուր հիսուն տոկոսի չափով, իսկ բացառիկ դեպքերում, երբ ըստ գործի հանգամանքների, հաշվի առնելով խախտողի անձը, այդ միջոցների կիրառումը կհամարվի անբավարար՝ վարչական կալանք մինչև տասնհինգ օր ժամանակով»:

2. ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ԽՍՀՄ-ում ժողովների, միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման և անցկացման կարգի մասին (1988 թվականի հուլիսի 28):

Այս Հրամանագիրը սահմանում է համապատասխան կանոններ, որոնք վերաբերում են նախնական արտոնմանը, արտոնման դիմումի վերաբերյալ որոշում կայացնող մարմնին (այն է՝ պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեին) դիմում ներկայացնելու կարգին ու դիմումի բովանդակությանը, դիմումի քննության արդյունքում կայացվելիք որոշմանը, վերադաս մարմնին այդ որոշումը բողոքարկելու հնարավորությանը, պահանջներին, որոնք անհրաժեշտ է պահպանել զանգվածային միջոցառումներ անցկացնելու ընթացքում (օրինակ, որ միջոցառումը պետք է անցկացվի դիմումում նշված վայրում և ժամին, դրա ընթացքում պետք է պահպանվի հասարակական կարգը, չի կարելի զենք կրել միջոցառման ընթացքում և այլն), արտոնումը մերժելու հիքմերին, և հիմքերին, որոնց առկայության դեպքում այս կամ այն կոնկրետ միջոցառումը կարող է արգելվել (օրինակ, դիմումի բացակայությունը, արտոնման մերժումը, հասարակական կարգի խախտումը և այլն):

3. ԽՍՀՄ օրենքը (այսուհետ՝ «Օրենք») «ԽՍՀՄ որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին ԽՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերը հաստատելու մասին» (1988 թվականի հոկտոմբերի 28):

Օրենքն ընդունելով, ԽՍՀՄ Գերագույն սովետը հաստատեց Նախագահության մի շարք հրամանագրեր, ներառյալ 1988 թվականի հուլիսի 28-ի վերը նշված Հրամանագիրը:

4. Հռչակագիր Հայաստանի անկախության մասին (1990 թվականի օգոստոսի 23)

Հոդված 1

«Հայաստանի ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն
...»

Հոդված 2

«Հայաստանի Հանրապետության ... տարածքում գործում են միայն
Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ու օրենքները:»

**5. ՀՀ սահմանադրական օրենքը անկախ պետականության
հիմնադրույթների մասին (1991 թվականի սեպտեմբերի 25)**

Հոդված 16

«Մինչև Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը
գործող սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով,
որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և Հայաստանի Անկախության
մասին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին»:

**6. ԱՊՀ-ի ստեղծման մասին 1991թվականի դեկտեմբերի 8-ի
համաձայնագիրը, վավերացված Հայաստանի
Հանրապետության կողմից 1991 թվականի դեկտեմբերի 21-
ին և 1992 թվականի փետրվարի 18-ին:**

Հոդված 11

«Սույն Համաձայնագիրը ստորագրելու պահից երրորդ պետությունների
նորմերը, ներառյալ նախկին ՍՍՀՄ նորմերը, չեն կիրառվում անդամ
պետությունների տարածքում»:

**7. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995
թվականի հունիսի 5)**

Նախաբան

«Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին
հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար
սկզբունքները եւ համազգային նպատակները ... ընդունում է Հայաստանի
Հանրապետության Սահմանադրությունը»:

Հոդված 26

«Քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ,
հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք»:

Հոդված 44

«Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու եւ
քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են
սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական եւ
հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության
առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների,
պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար»:

Հոդված 116

«Սահմանադրության ուժի մեջ մտնելու պահից՝ 1) դադարում է 1978 թվականի Սահմանադրության, հետագա փոփոխություններով եւ լրացումներով հանդերձ, ինչպես նաեւ սահմանադրական օրենքների գործողությունը. 2) Հայաստանի Հանրապետության օրենքները եւ մյուս իրավական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում Սահմանադրությանը».

8. (ՀՀ նախագահի հրամանագիրը Երևան քաղաքում պետական կառավարման մասին) (1997թվականի մայիսի 6)

Հոդված 1.5 Երևանի քաղաքապետը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում է Երևանի տարածքում խողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու հարցը:

ԲՈՂՈՔՆԵՐԸ

1. Դիմումատուն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր, որ խաղաղ հավաքների ազատության իր իրավունքի սահմանափակումը նախատեսված չէր օրենքով:

2. Նա այնուհետ 13-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր, որ ինքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից զրկված է եղել Վճռաբեկ դատարանում, քանի որ վերջինս մերժել է քննել իր բողոքը:

ՕՐԵՆՔԸ

1. Դիմումատուն բողոքում է, որ միջամտությունը սահմանված չի եղել օրենքով: Նա հիմնվում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի վրա, որի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

« Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների իրավունք ունի ...:

1. Այդ իրավունքների իրականացումը ենթակա չէ ոչ մի տեսակի սահմանափակումների, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց

առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով...»

Կառավարությունը պնդում է, որ փողոցային երթերի և ցույցերի կազմակերպման և անցկացման կարգը սահմանված է օրենքով (տե՛ս վերը. «Համապատասխան ներպետական օրենսդրությունը»), որը հաստատվել է 1988 թվականի հունիսի 28-ի Հռչակագրով: Օրենքն ընդունվել է 1988 թվականի հոկտեմբերի 28-ին, այն է՝ նախքան Հայաստանի Հանրապետության անկախությունը, որը տեղի ունեցավ 1990 թվականի օգոստոսի 23-ին, սակայն շարունակեց գործել անկախության ձեռք բերումից հետո՝ Անկախ պետականության հիմնադրույթների մասին ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի ուժով: Այսպիսով, 1991-ից 1995 թվականների ընթացքում օրենքը գործել է որպես Հայաստանի Հանրապետության օրենք: 1995 թվականի հունիսի 5-ին Սահմանադրության ընդունից հետո օրենքը շարունակել է գործել Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով:

Դիմումատուն պնդում է, որ օրենքը պետք է մատչելի և կանխատեսելի լինի: Ինքը չի կարողացել գտնել օրենքը: Բացի այդ, նա հարցադրում է անում, թե ինչու դատարանները հղում չեն կատարել օրենքին, եթե այն գործել է: Ցանկացած դեպքում, օրենքը Հայաստանի Հանրապետությունում չի գործել՝ ԱՊՀ-ի ստեղծման մասին համաձայնագրի 11-րդ հոդվածի ուժով, որով արգելվում էր ՍՍՀՄ օրենքների գործողությունը անդամ պետությունների տարածքում: Հայաստանն այս համաձայնագիրը վավերացրել է 1992 թվականի փետրվարի 18-ին:

Կառավարությունն, ի պատասխան նշում է, որ օրենքը տպագրվել է 1988 թվականի օգոստոսի 3-ին ԽՍՀՄ Գերագույն Սովետի թիվ 31 Տեղեկագրում: ԱՊՀ Կոնվենցիայի 11-րդ հոդվածը չէր տարածվում այդ օրենքի վրա, քանի որ վերջինս այդ ժամանակ, 1991 թվականի սեպտեմբերի 25-ի Սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի ուժով արդեն գործում էր որպես Հայաստանի Հանրապետության օրենք: 1995 թվականից հետո այն շարունակել է գործել Սահմանադրության հիման վրա:

Դիմումատուն ի պատասխան նշում է, որ 1991 թվականին ԱՊՀ կոնվենցիայի հիման վրա իր ուժը կորցրած օրենքը չէր կարող կրկին ուժի մեջ մտնել Սահմանադրության ընդունման ուժով: Հետևաբար 1988 թվականի հունիսի 28-ի Հռչակագիրը չէր կարող գործել պրակտիկայում, քանի որ այն ներառում էր այնպիսի կառույցներ, որոնք ՍՍՀՄ փլուզումից հետո այլևս գոյություն չունեին, ինչպես օրինակ պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեները և վերադաս մարմինը ու կարող են բողոքարկվել գործադիր կոմիտեների որոշումները:

Դատարանը կողմերի ներկայացրած փաստարկների լույսի ներքո գտնում է, որ բողոքները, Կոնվենցիայի իմաստով, ներառում են օրենքի և փաստերի հետ կապված լուրջ հարցեր, որոնց լուծումը պահանջում է գործի ըստ էության քննություն: Հետևաբար դատարանը եզրակացնում է, որ սույն գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով անհամատեղելի չէ: Այն անընդունելի հայտարարելու համար որևէ հիմք չկա:

2. Դիմումատուն բողոքում է, որ ինքը զրկված է եղել Վճռաբեկ դատարանում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցից: Նա հիմնվում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վրա, որի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«Յուրաքանչյուր մարդ, ում իրավունքներն ու ազատությունները, որոնք շարադրված են սույն կոնվենցիայում, խախտված են, պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, ...»:

Դատարանը հիշատակում է, որ 13-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես ստորադաս դատարանի կայացրած որոշումները վերադաս դատարանին բողոքարկելու հնարավորություն տվող միջոց (Ս. և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 13135/87, 1988 թվականի հունիսի 4-ի որոշում):

Սույն գործով Վճռաբեկ դատարանը մերժել է քննել դիմումատուի վճռաբեկ բողոքը, քանի որ այդ ժամանակ ներպետական օրենսդրությամբ վարչական գործերով վճռաբեկ բողոք բերելու իրավունք նախատեսված չէր: Այդ իրավունքը, վերը նշված պատճառներով, նույնպես չի կարող ընկնել 13-րդ հոդվածի պաշտպանության տակ:

Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է չպետք է ընդունվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

Վերոգրյալից ելնելով Դատարանը միաձայն.

Հավաքների ազատության միջամտության վերաբերյալ Դիմումատուի բողոքը, հայտարարում է ընդունելի՝ առանց անդրադառնալու դրա էությանը:

Գանգատի մնացած մասը հայտարարում է անընդունելի:

Վինսենթ Բերգեր

Բոշչան Ս. Ջուլյանչիչ

Քարտուղար

Նախագահ